

ԱՊԱԳԻՆՅ

ԽԳ. ՏԱՐԻ ԹԻ 2409 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 6 ՆՈՅԵՄԲԵՐ 2023
• VOL. XLIII, NO 2409 • 6 NOVEMBRE 2023 • MONDAY, 6 NOVEMBER 2023



Entrusted for over 25 years

Journey Home™ coverage included with new pre-arrangement contracts* (\$595 value)

www.komitas.ca (514) 331-0400

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԻՒՆԸ ՉԵՂԱՐԿԱԾ Է «ԿՈՎԵՐՈՒ ՊԱՐՏԵՉ»-Ի ՀԱՍԱՁԱՅՆԱԳԻՐԸ



Երուսաղեմի Հայոց պատրիարքությունը կը տեղեկացնէ, որ Նամակ ուղարկած է Xana Gardens Ltd-ին՝ յայտնելով, որ չեղարկած է Երուսաղեմի չին քաղաքի հայկական թաղամասի «Կովերու պարտեզ» կալուածքին վերաբերեալ 2021թ. Յուլիս 8-ին ստորագրուած համաձայնագիրը: Այս մասին կը յայտնէ Երուսաղեմի պատրիարքութեան դիւանապետ Հայր Աղան Գոգչեան:

«Կովերու պարտեզ»-ը կը գտնուի պատմական Սիոն լեռան վրայ, Երուսաղեմի հայկական թաղամասի հարաւարեւմտեան անկիւնը: Դեռ 2021թ. Նոյեմբերին Մայր Աթոռի մէջ Գերագոյն հոգեւոր խորհուրդը քննարկած էր Երուսաղեմի Հայոց պատրիարքարանին կողմէ «Կովերու պարտեզ» կալուածքը վարձակալութեան յանձնելու խնդիրը եւ կոչ ըրած էր չեղարկելու այդ որոշումը:

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵՉ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԶԻՆՈՒՐՈՐԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՀՏԵՒԱՆԵՈՎ ԶՈՅՈՒԾ Է 200-ԷՆ ԱՖԵԼԻ ԶԻՆՈՒՐ



Նախաքննութեան ընթացքին ձեռք բերուած փաստացի տուեալներուն համաձայն, Ատրպէյճանի 19-20 Սեպտեմբերին իրականացուցած զինուորական յարձակումին հետեանքով Լեռնային Ղարաբաղի մէջ զոհուած է 200-էն աւելի զինուոր եւ քաղաքացիական անձ: Մտաւոր 12 քաղաքացի եւ 30 զինուորական ծառայող համարուած է անհետ կորած: Առկայ են առնուազն 14 անձի խոշտանգման ենթարկուելու դէպքեր, որոնցմէ 12-ը զինուոր են, 2-ը՝ քաղաքացի: Զինուորական գործողութիւններուն հետեանքով սպաննուած է 3 երեխայ, տարբեր աստիճանի մարմնական վնասուածքներ ստացած է 231 զինուոր եւ 80 քաղաքացի:

Ատրպէյճանի կողմէ ԼՂ բնակչութեան նկատմամբ ցեղային զտման քաղաքականութեան ծրագրուած ու կանխամրցուած քաղաքականութեան հետեանքով՝ ԼՂ-ի գրեթէ ողջ բնակչութիւնը՝ 100 հազարէն աւելի անձ՝ բացառապէս ֆիզիքապէս փրկուելու անհրաժեշտութենէն դրդուած, բռնի տեղահանուած է՝ չունենալով ունեցուածքը, գոյքը դուրս բերելու պատշաճ ժամանակ եւ կարելիութիւն: Ընդ որուն, բռնի տեղահանութեան ընթացքին եւ անոր անմիջապէս յաջորդող ժամանակահատուածին արձանագրուած է 64 քաղաքացիի մահ, որոնք ուղիղ պատճառական կապի մէջ են պաշարման ժամանակահատուածին, ցեղային զտումներու գործողութիւններուն եւ տեղահանութեան ընթացքին կրած զրկանքներուն՝ սովի, դեղորայքային եւ բժշկական օգնութեան բացակայութեան եւ այլին հետ:

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ԲՈՆԻ ՏԵՂԱՅԱՆՈՒԹՆԵՐՈՒՆ. «Լ. ՂԱՐԱԲԱՂ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԵՆԱԼՈՒ ՊԱՐԱԳԱՅԻՆ ԱՊՐԵՅԷՔ ԵՒ ԱՇԽԱՏԵՅԷՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՉ»

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ՝ Նիկոլ Փաշինեան Լեռնային Ղարաբաղէն բռնի տեղահանուածներուն յորդորած է մնալ, ապրիլ եւ աշխատիլ Հայաստանի մէջ:

«Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ այս մասին Փաշինեանը բարձրաձայնած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան՝ Նոյեմբեր 2-ի նիստի ընթացքին:

«Նորից ուզում եմ այս դիրքորոշումն ասել եւ դիմել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանուած մեր քոյրերին և եղբայրներին: Եթէ նրանք առարկայական հնարաւորութիւն չեն ունենալու վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, ապա մեր քաղաքականութիւնն ու ցանկութիւնն այն է, որ նրանք բոլորը մնան Հայաստանի Հանրապետութիւնում, ապրեն, աշխատեն Հայաստանի Հանրապետութիւնում», - ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:



ՆՈՒՊԱՐ ԱՖԵԵԱՆ CNN-Ի ՊԱՏԿԵՐԱՍՓԻՌՈՒՆ ԽՕՍԱԾ Է ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԵՉ ԻՐԱԿԱՆԱՅՈՒԿԸ ԷԹՆԻԿ ԶՏՄԱՆ ԵՒ ՌՈՒԲԷՆ ՎԱՐՊԱՆԵԱՆԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ամերիկեան Moderna դեղագործական ընկերութեան համահիմնադիր՝ Նուպար Աֆեեան CNN-ի լրագրող Քրիստիան Ամանփուրի հետ զրոյցի ընթացքին խօսած է Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի կողմէ իրականացուած էթնիկ զտման մասին:

«Արմէնփրէս»-ի փոխանցմամբ՝ Աֆեեան անդրադարձած է 2020 թ-ին Ատրպէյճանի սանձազերծած 44-օրեայ պատերազմին, անկէ 2 տարի անց Պաքուի կողմէ Լեռնային Ղարաբաղի շրջափակման եւ 2023 թ. Սեպտեմբեր 19-ին Լեռնային Ղարաբաղի վրայ ատրպէյճանական յարձակումին, որու հետեանքով հարիւրաւոր մարդիկ զոհուեցան, իսկ Արցախի հայերը ստիպուած եղան զանգուածային կերպով լքել իրենց պատմական հայրենիքը:

«Երբ մենք կը խօսինք 120 հազար մարդու մասին, որոնք կը լքեն իրենց հայրենի հողը, այդ էթնիկ զտում է՝ դասական սահմանմամբ: Եւ այդ իմ կողմէ տրուած սահմանումը չէ: Այդ սահմանումը տրուած է միջազգային փորձագետներու մեծ մասի կողմէ, որոնք բարձրաձայնած են այս մասին վերջին մէկ ամսուայ ընթացքին՝ ըսելով, որ այն, ինչ տեղի կ'ունենայ, նախ շրջափակումը, այնուհետեւ անոր յաջորդող իրադարձութիւնները, էթնիկ զտում են», - ըսած է Աֆեեան:

Ան նաեւ անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի նախկին պետ նախարար Ռուբէն Վարդանեանի ձերբակալութեան մասին Ատրպէյճանի կողմէ:

«Այս, իսկապէս, չափազանց անձնական եւ ցաւալի իրավիճակ է», - նշած է Աֆեեան՝ յիշելով տարբեր մարդասիրական ծրագրերու մէջ Ռուբէն Վարդանեանի հետ իր 23 տարուայ համատեղ աշխատանքի մասին, նաեւ յաւելելով, որ Ռուբէն Վարդանեան պետ նախարարի պաշտօնէն հեռանալէն ետք ան մնացած է Լեռնային Ղարաբաղի մէջ եւ հոն մարդասիրական նախագծեր իրականացուցած է:



Ի ԽՆԴԻՐ ՄԵՐ ՊԱՏԱՆԴՆԵՐՈՒ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԻՆ

ՅԱԿՈՒ ՍԷՏԻԵՆ

Անշուշտ հիլամ Ալիեյը պետական այն գործիչը չէ, որմէ կարելի էր ակնկալել յաղթողի վեհանձնութիւն, պետական հեռատես մարդու խոհեմութիւն, մարդ՝ որ գիտէ թէ պատերազմի է թէ խաղաղութեան գինը, տեսական խաղաղութեան գինը:

Ընդհակառակն, ասիական տափաստաններէն իր վաչկատուն (nomad) նախահայրերէն ժառանգած գայլային բնագոյնը միշտ կենդանի են իր մէջ՝ յօշոտելու, յափշտակելու, նուաստացնելու իր գոհերը:

Նոկտեմբեր 15-ին հիլամը նորէն Արցախ գացած էր, նման այն ոճրագործին, որ, ինչպէս Տոսթոյեակիի «Ոճիր եւ պատիժ» վէպի հերոսներէն դատական քննիչը կը բացատրէ, շարունակ կը վերադառնայ հոն, ուր կատարած է իր եղեռնագործութիւնը: Սարսանկի ջրամբար այցելելէն ետք, ջրամբար՝ գոր 44-օրեայ պատերազմին եթէ մեր ռազմաքաղաքական ղեկավարութիւնը պճեղ մը գայլային բնագոյն ունենար՝ կրնար հրթիռներով կործանել ամբարտակը եւ ջրամոյն ընել մօտակայքի ազերիական բազմաթիւ բնակավայրեր: Այնուհետեւ հիլամը գացած է մայրաքաղաք Ստեփանակերտ, մտած նախագահական պալատ՝ անարգելու համար հոն աշխատած եւ զինք ու հօրը պարտութեան մատնած նախագահներ Ռոպերթ Քոչարեանը, Արկատի Ղուկասեանը, Բակո Սահակեանը եւ միւսները: Անարգելու համար զինուորական փառաւոր ուղի անցած Զօրավարներ՝ Լեւոն Մնացականեանը եւ Դաւիթ Մանուկեանը: Բոլորն ալ, բացի, բարեբախտաբար, Ռ. Քոչարեանէն, ատրայեյճանական կալանավայրերու մէջ հարցաքննութեան, ծաղրի, հաւանաբար նաեւ ֆիզիքական ու հոգեկան կտտանքներու կ'ենթարկուին՝ ծիծաղելի դատական գործողութիւններով, իսրայէլացիներէն փոխ առնուած «ահաբեկչական» ամբաստանութիւններով:

Ալիեյի կտի, ամբարտաւան կեցուածքը, լպիրշ արտայայտութիւնները ծանօթ են բոլորին, սակայն Նոկտեմբեր 19-ին ան գերազանցեց ինքզինքը եւ անգամ մը եւս ապացուցեց, որ պետական մարդ չէ, այլ՝ բախտաւոր բռնատէր, որ բացի բնական հարստութիւններէն, նաեւ անոնցմով, ունի հզօր հովանաւորներ՝ Թորքիան եւ Իսրայէլը, որոնք անմիջական մասնակցութեամբ յաղթանակ ապահովեցին անոր: Բախտաւոր է նաեւ անով, որ միջազգային զանազան միջամտութիւններով իշխանութեան եկած մեր նոր իշխանութիւնը թէ ռազմաքաղաքական, թէ դիւանագիտական եւ թէ ներքին ազգային միասնութիւն ստեղծելու իր պարտականութեան մէջ կատարելապէս անկարող դուրս ելաւ, ու փոխանակ նախկին իշխանութեանց սխալները սրբագրելու, երկիրը վերածեց անոյժ եւ անօգնական առարկայի:

Հիլամ Ալիեյը «ծաղրածու» կը կոչէ Արցախի շանրապետութեան, ուշադրութիւն, երեք նախագահները՝ առանց անունները տալու: Ան կ'ուզէ մոռնալ ու մոռցնել, որ Արցախի հինգ նախագահներէն երեքի օրով հայկական ուժերէն փառաւոր ծեծ կերած է իր բանակը եւ այժմ կը յոխորտայ, երբ անոնք պաշտօնի վրայ չեն: «Նոս նստած այդ երեք ծաղրածուները ինքզինքնին նախագահ կ'անուանէին, իսկ հիմա արժանի պատիժի կ'արժանանան», կ'ըսէ հիլամ՝ առանց ծածկել կարողանալու այդ նախագահներէն իր «վառուած» ըլլալու փաստը: Արցախի այն նախագահները, որոնք, Մայր Նայաստանի օգնութեամբ, հակառակ իրենց համեմատաբար նուազ ուժերուն, ծունկի կը բերէին ազերիական բանակը, ցոյց տալու: Իրավիճակ, որ մեզի կը յիշեցնէ Արշակ Բ. Թագաւորը՝ Պարսից շահ Շապուհի առջէ:

Ալիեյը յայտարարութեան ամբարտաւոր անդրադարձեր է Սեպտեմբեր 21-ին Արցախի միւս ղեկավարներուն հետ ձերբակալուած եւ այժմ անոնց հետ Պաքոյի բանտերէն մէկուն մէջ գտնուող նախկին պետնախարար Ռուբէն Վարդանեանին, այն մարդուն՝ որ Ստեփանակերտի անկումէն դէռ շատ առաջ բոլոր հնարաւորութիւնները ունէր շրջափակումէն դուրս պրծնելու. ազերիները պակաս կաշառակեր չեն, քան հայերը, եւ ուսերը աւելի պակաս չեն՝ քան հայերն ու ազերիները: Բայց մնաց պաշարման օղակին մէջ, քանզի չէր կրնար ընկղմուող նաւը լքել ժողովուրդէն առաջ: «Չիմա,- կ'ըսէ Ալիեյը՝ ակնարկելով Վարդանեանին,- անկա Պաքոյի մեկուսարանին մէջ անոր թէյ կը մատուցեն», ինչ որ ազերիական գողականուստիկանական խօսոյթով կը նշանակէ վրան խնդալ,



Երգիծակար՝ Թորոյի, յատուկ «Պայքար»-ին

ստորացնել...

Եւ ոչ միայն Ռ. Վարդանեանը: Խորհրդարանի նախագահ Դաւիթ Իշխանեանը, նախկին չորս նախագահներէն երեքը եւ ուրիշներ նոյնպէս կրնային հեռանալ, սակայն չդիմեցին դաւաճանական այդ քայլին, իսկ նախագահի խորհրդական Դաւիթ Պապայեանը անձամբ Շուշի գնաց եւ յանձնուեցաւ՝ ազգային ու պետական իր ուղղամտութիւնը ապացուցելու:

Այժմ «ահաբեկչի» եւ «պատերազմական յանցագործի» մեղադրանքներով ալիեյեան դատարանը կը պատրաստուի երկարաժամկետ բանտարկութեան վճիռներ արձակել անոնց դէմ, ներառեալ Ռ. Վարդանեանը, որ բնաւ առնչուած չէ եղած պատերազմական գործողութիւններու: Սակայն ան, հայ եւ օտարազգի իր գործընկերներուն օգնութեամբ, Նայոց ցեղասպանութեան հարցին հանրահռչակումը իր Aurora շարժմամբ դրաւ միջազգային ամենաբարձր հարթակի վրայ՝ որպէս ընդհանրապէս հսկացեղասպանական պայքարի գիտահանրային ամպիոն: Նետեւաբար ան թշնամի կը նկատուի բոլոր ցեղասպաններու եւ յատկապէս՝ Ալիեյի mentor էրտողանի կողմէ: Փաստօրէն հիլամը, պատժելով Ռ. Վարդանեանը, ծառայութիւն մատուցած կ'ըլլայ ոչ միայն ինքզինքին, այլեւ էրտողանին, չբացառելով նաեւ, անուղակիօրէն, Իսրայէլին ու հրեական որոշ կազմակերպութիւններու, որոնք ցեղասպանութիւն եզրոյթը (term) սեփականացուցած են ամբողջութեամբ:

Ինչո՞ւ համար կը գրուին այս տողերը:

Անընդունելի, դատապարտելի է այն լռութիւնը, անգործութիւնը, պիտի ըստի՝ անտարբերութիւնը, որ կը տիրէ հայաշխարհի մէջ ոչ միայն Ռ. Վարդանեանի, այլեւ մեր միւս կալանաւորներուն նկատմամբ: Բացի Երեւանի Ազատութեան հրապարակին վրայ կայացած մէկ հանրահաւաքէն, Թեքէեան Մշակութային Միութեան, ՌԱԿ չամակարգուած Մամուլի «Ո՛չ ահաբեկչութեան» շարժումէն, ոչ մէկ բողոք եւ պաշտպանութիւն մեր կալանաւորներուն, բոլոր բանտարկեալներուն: Միայն վերջերս իմացանք, որ գործի անցած է «Ռաֆայէլ Լեմբին» հակացեղասպանական հիմնարկը վերջապէս: Սակայն համաժողովրդային շարժում չկայ ու չկայ: Կը նշանակէ՝ չկայ հանրային գիտակցումը, թէ Արցախի պետական ու զինուորական ղեկավարութեան կալանաւորումն ու դատապարտումը համազօր է համայն հայութեան դատապարտումին՝ որպէս «ցեղասպան» եւ «ահաբեկչ»...

Ոչ ըստ այդքան թող չուրդէ Նայաստանի ներկայ իշխանութեան կողմը ակնկալութեամբ: Արդէն հաստատուած կարծիք է, որ այդ իշխանութիւնը այնքան ալ դժգոհ չէ Արցախի ղեկավարութեան պատանդի կացութենէն:

Այդ կարծիքը օրերս հաստատուեցաւ նոյնինքն Ռուսիոյ նախագահ Փութինի բերանով: Պատասխանելով լրագրողի հարցին, թէ Մոսկուայի ինչո՞ւ չի միջամտեր Ռ. Վարդանեանի «գործի», Վլատիմիր Փութինը նախ փորձեց արդարանալ մատնանշելով, որ ան ոռուսական հզօր քաղաքացիութենէն հրաժարած է, կարծես այդ երկիրը միայն իր հպատակութիւնը կրող քաղաքացիները կրնայ պաշտպանել, ապա կատարեց ինքնարդարացման ցրնցիչ բացայայտումը, թէ պաշտօնական Երեւանն ալ չի փափաքի անոր եւ միւս պատանդներուն վերադարձը... Այս իրավիճակին դիմաց հայութիւնը, յատկապէս անոր

Շար. - էջ 9

ՆԱԽԱՐԱՐ ԶԵՐՈՒԲԵԱՆ. «ԱՅՍ ՏԱՐԻ ԴԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼԱԾ Է 1,8 ՄԻԼԻՈՆ ԶՐՕՍԱՇՐՋԻԿ, ԻՐԱՔԱՆՉԻՐԸ ԴԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ԿԸ ԾԱԽՍԷ ՇՈՒՐՋ 1200 ՏՈԼԱՐ»

Այս տարի Նայաստան այցելած է 1,8 միլիոն զբօսաշրջիկ, իւրաքանչիւրը Նայաստանի մէջ կը ծախսէ շուրջ 1200 տոլար: Ազգային ժողովին մէջ «ՀՀ 2024 թուականի պետական պիտուծէի մասին» օրէնքի նախագիծը քննարկելու ատեն այս մասին ըսաւ ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Քերրոբեանը: Ըստ անոր՝ ներքին զբօսաշրջութեամբ պայմանաւորուած, զբօսաշրջիկէն Նայաստանի պիտուծ կը մտնէ մօտ 44 հազար դրամ: «Այսինքն՝ մենք խօսում ենք այն մասին, որ ներգնայ զբօսաշրջութիւնից ՀՀ պիտուծէ մտնում է մօտ 100 միլիարդ դրամ»:

Քերրոբեան նաեւ տեղեկացուց, որ զբօսաշրջութեան ոլորտին մէջ կառավարութեան ներդրումները վերջին 3 տարուան ընթացքին աճած են 6,5 անգամ՝ 2 միլիարդէն մինչեւ 12 միլիարդ:

ԱԶԱԳԵՅ
Շարքաթերք

ABAKA

**Hebdomadaire Arménien
Armenian Weekly ISSN 0382-9251**

Publié par /Published by
Le Centre de Publication Tékéyan
825 rue Manogian, Saint-Laurent,
Québec H4N 1Z5

Tél: (514) 747-6680 • FAX: (514) 747-6162
e-mail: abaka@bellnet.ca
www.tekeyanmontreal.ca

**Պատասխանատու խմբագիր՝
ՍԷՏԻՍ ՊԱՎԳՆԵԱՆ**

**Ծանուցումներու
նուիրատուութիւններու եւ
գրասենեակի պատասխանատու՝
ՍԱԼԻ ՄԱՐԿՈՍԵԱՆ**

**Թորոնթոյի պատասխանատու՝
ՄԱՏԱԾ Բ. ՄԱՍՈՒՐԵԱՆ**

Canada
2nd Class \$80 (QC & ON)
1ère classe/first class \$150
U.S.A. 1st class (US) \$150
Autres pays/Other countries:
1st class (US)\$120
Per issue \$1.75

Dépôt légal: Bibliothèque du Québec

PM40015549R10945
TPS/GST - R119209294 • TVQ/PST #1006268699

Financé par le gouvernement du Canada
Funded by the Government of Canada

Canada

«ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՋԵՐՄ ՈՒ ՀՈԳԵՊԱՐԱՐ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ SONA LAKHOYAN-OLIVIER-Ի ՀԵՏ

ՀԱՐՑԱԶԻՐՈՅՑԸ ՎԱՐԵՑ՝ ՊԵՐՃ ԳՈԳՈՐԵԱՆ

Քաղաքական ասպարեզին մեջ քաղաքագետի մը թաքուն ծրագիրները պահուրտած կ'ըլլան, կասկածելի ու բռնազբոսիկ ժպիտներու ետին, իսկ ուղղուած հարցումներուն՝ իր պատասխանները կ'ըլլան երկիմաստ, որոնցմէ կամ կը կռահես այն ինչ որ կը փափաքէիր կամ բան մըն ալ չես հասկնար:

Տիկին Սոնա Լախոյեան Օլիվիէի հետ «Ապագայ» շաբաթաթերթի հանդիպումը ձգեց ճիշդ հակառակ տպաւորութիւնը:

Դեմ յանդիման եկանք աշխոյժ, խանդավառ եւ հաճելի անձնաւորութեան մը որուն աչքերէն կը կայծկլտայ յստակութիւն եւ շրթներուն վրայ ճշմարտութեան անկեղծ ժպիտ մը:

Տասը վայրկեան ետք արդէն երկուստեք հանգստորէն կը խօսակցեինք, կարծես տարիներու՝ անցեալի ծանօթութիւնը կը կրկնուէր:

Կը խօսէր... կը պատմէր... հեզասահ... առանց դադարի եւ առանց վերապահութեան:

Տիկին Սոնա Լախոյեան՝ անդրանիկ դուստրը Բիւզանդ Լախոյեանի, ծնած է Լիբանան, ուր նախնական ուսումը ստանալէ ետք, այդ շարունակած է Գանատա: Նախ՝ հետեւելով հորը, յետոյ եղբորը՝ քայլերուն: Սոնա կը մասնակցի մարմնամարզային մրցումներու, միանալով ՀՄԸՄ «Կամք»ի խումբին, մինչեւ կը հասնի ՀՄԸՄ-ի ներքին մրցումներու 800 մեթր վազքի ախոյանութեան, արձանագրելով նոր չափանիշ մը:

Տիկին Լախոյեան երկար տարիներ կը ստանձնէ ՀՄԸՄ «Կամք»ի վարիչի (Coach) պաշտօնը: 2010-ին Լաւալի ՀՄԸՄ-ի հիմնադիրներէն ըլլալով կը ստանձնէ ատենապետութեան պատասխանատուութիւնը եւ ինչպէս անցեալին, միշտ օգտակար հանդիսանալով Հայ գաղութին, կը ծրագրէ Սուրիոյ դժուարին պայմաններէն ազատուող երիտասարդներուն, տրամադրել ՀՄԸՄ-ը իբրեւ հաւաքման նոր կեդրոն: Այսօր Լաւալի ՀՄԸՄ-ը 250-է աւելի հետազօտիչ (Scout) անդամներ ունի:

Այսքանը՝ իբրեւ անձնական ծանօթութիւն:

Իսկ գալով իբրեւ ասպարեզ, ուսումը կ'աւարտէ քաղաքագիտական վկայականներով «Համաշխարհային Յարաբերութիւններ»-ու master-ով: Ընդունւած է Դպրոցական Յանձնակատար (Commission Scolaire de Laval) Լաւալի իբրեւ յարաբերական ներկայացուցիչ՝ Commissair-ի պաշտօնով (մօտ 8 տարի):

Եղած է փոխատենապետ Լաւալի առողջապահական հիմնարկութեան (Fondation Cite' de la Sante' de Laval):

Տիրապետած է հինգ լեզուներու. հայերէն, ֆրանսերէն, անգլերէն, արաբերէն եւ թրքերէն. իսկ սկզբնական գիտութիւնը ստացած է յունարէն, ռուսերէն, գերմաներէն եւ սպաներէն լեզուներու՝ Concordia համալսարանին մէջ:

Միշտ փափաքած է իր շրջանի քաղաքացիներուն տալ որակաւոր կեանք, պահելով հաւասարակշռուած վիճակ՝ տնտեսական բարելաւումի (Economic progress), ընկերային զարգացման (Social development) եւ կենսոլորտի պահպանման (Environmental protection):

Ամենէն աչքառու յաջողութիւնը, որ ունեցաւ տիկին Լախոյեան, չոկտեմբեր 2022-ին Գանատայի Քէպէք նահանգի ընտրութիւններուն՝ ընդունուեցաւ Լաւալ քաղաքի՝ Chomedey շրջանի խորհրդարանի՝ երեսփոխան, ներկայացնելով՝ Partie Liberal du Que'bec:

Մեր խօսակցութեան լուսարձակին տակ եղաւ, իր ազգային ու մշակութային նախասիրութիւնները, հայկականը՝ իր ցաւերով ու փառքերով, իրականութիւններով ու յուսախաբութիւններով:

Պահ մը մոռցեր էինք քաղաքականութիւնն ու մեր հանդիպման շարժառիթը ու կը խօսէինք-աւելի ճիշդը ինքն իր յորդահոս մասնակցութեամբ - հայրենիքի կամ Սփիւռքի մասին, մե'ր մասին:

Ժամանակը կը յառաջանար. թուրքերու նօթերուն նայելով՝ նկատեցի վերջին հարցումը. որուն չէի անդրադարձած:

- **Տիկին Լախոյեան - Ձեր քաղաքային կեանքի ընթացքին չէք ունեցած մարտահրաւերներ, որոնց Ձեր մօտեցումը փոփոխութեան կամ բարելաւումի կը կարօտէր:**



Առանց տատամսելու ըսաւ.- «ըրաժներէս բնաւ չեմ զղջացած: Երկարատեւ օրուայ աշխատանքս ետք (առաւօտեան ժամը 5:00-էն մինչեւ գիշերուայ 11:30) հանգիստ կը դնեմ գլուխս բարձին ու հանդարտ խղճով կը քնանամ: Նոյնիսկ երբ առաջարկեցին ինծի ստանձնել Chomedey-էն տարբեր շրջան մը՝ հաստատ մերժեցի. «կը փափաքէի լաւագոյնս ծառայել հոն՝ ուր լաւ կը ճանչնամ»:

Ուզեցի հարցումիս ուղղութիւնը փոխել ու տարբեր ձեւով հարցուցի: **«Ըսել կուզէի թէ արդե՞՞ք կայ պատահար մը, որ կը զղջաք ըրած կամ չ'ըրած ըլլալնուդ համար»:**

Լռեց: Մտքերը սլացան ու տարին զինք հեռու... կարծես շատ հեռու: Լռեց բաւական երկար. արտասովոր էր այսպիսի խօսող ու ճռուողով անձի մը համար: Վերջապէս խեղդուած ու դողդոջուն ձայնով մը փսփսաց:

- 8 Փետրուար 2023-ին Քէպէքի l'assemble'e National du Que'bec-ի առջեւ, մի քանի գործակիցներու հետ, ներկայացուցիք առաջարկ մը (motion), դատապարտելով Արցախի Լաչինի (Բերձորի) անցակէտի առնչութեամբ՝ կատարուած ոճիւրները. եւ այդ բողոքը ընդունուեցաւ Քէպէքի կառավարութեան կողմէ: Կը փափաքէի նոյնօրինակ առաջարկ մը եւս ներկայացնել, պահանջելով Լեռնային Ղարաբաղի հայկական ազատ պետականութեան ճանաչումը (recognition). սակայն չկրցայ... ներողութիւն չեմ կրնար ըսել «չկրցայ» այլ «չհասայ: Դէպքերը շատ արագ զարգացան»:

Ըսաւ ու լռեց: Ես ալ լռեցի: Լռութիւն մը որուն մէջ կը պարփակէր, ցաւ, տխրութիւն սակայն նոյն ատեն հպարտանք, նմանօրինակ քաղաքական գաղափարներ ու հաղորդամիջոցներ - (Media) օգտագործելու ու օգտուելու անոնց ստեղծած անծայրածիր ուժերէն:

Ձեռքի անկեղծ սեղմումով բաժնուեցանք տիկ. Սոնա Լախոյեան Օլիվիէ-էն շնորհակալ ըլլալով, որ հակառակ իր սեղմ օրակարգին կրցաւ մեզի տրամադրել հաճելի եւ մանաւանդ տեղեկատուական (Informative) պահեր: Պատուաբեր հայ' մը, որ քաղաքական սկզբունքներուն առընթեր չի մոռնար իր հայկական բարոյական-ազգային համոզումները՝ որպէս կեանքի ուղղութիւն:

...Եւ վստահ պիտի հասնի - այդ մեր մաղթանքն ալ է - այն **կիզակէտին** որ կը հետապնդէ **անկեղծ ու յստակ** քայլերով:

Սփիւռքը պէ'տք ունի նմանօրինակ անձերու: Ճիշդ է թէ ընտրութիւններու ժամանակ, անոնք պէտք ունին մեր **ձայնին**, սակայն մե'նք ալ պէտք ունինք իրենց **բարձրաձայն** խորհրդարանային (parliamentary) ուժին:

ՆՈՒՊԱ ... Շար. - էջ 1 - ԷՆ

Նման անարդարութիւնները:
Խօսելով այս ամէնի մասին եւ ահագանգելու իր անձնական պատճառներու մասին՝ Աֆէեան յիշեցուցած է, որ իր նախնիները մագապուրծ եղած են Օսմանեան կայսրութեան կողմէ՝ իրագործուած Հայոց Ցեղասպանութիւնէն, իսկ իր ընտանիքը փախած է Լիբանանէն՝ քաղաքացիական պատերազմի ժամանակ:
COVID-19-ի դեմ պատուաստանիւթ ստեղծած ընկերութեան համահիմնա-

դիրը յիշեցուցած է վերջին 25 տարիներուն Հայաստանի մէջ տարբեր ծրագրերու մէջ ներգրաւուած ըլլալու, ինչպէս նաեւ «Արորա» համաշխարհային մարդասիրական մրցանակը ստեղծելու մասին: Աֆէեանի խօսքով՝ իրեն կը գոհացնէր այն, որ Հայոց Ցեղասպանութիւնէն 1 դար անց հնարաւորութիւն ունէր այդ նախագծի միջոցով օգնել ճնշումներու ենթարկուած տարբեր մարդկանց եւ այնպէս ընել, որ նման բան այլեւս երբեք տեղի չունենայ:
«Երբ աշխարհը մի կողմ կանգնած կը դիտէ անարդարութիւնները եւ ոչինչ չընէր, ապա ոչ միայն դժուար է հասնիլ արդարութեան, այլեւ դժուար է հասնիլ խաղաղութեան», - ըսած է Նուպար Աֆէեան:

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՅԱՆՔՆԵՐԻ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ԹԵՔԵԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԱՅԱՅԵՐԻՆ ԱՆՎՈՒԹԵԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Համաձայն Միացեալ Նահանգների Եւ Գանատայի Թեքեան Մշակութային Միութեան վարչութեան կողմից ՈՐՈՇՄԱՆ՝ այս անգամ օգնութիւնը տրամադրուեց արցախահայ բազմանդամ եւ սոցիալապէս անապահով ընտանիքներին:

2023 թուականի Սեպտեմբերի 19-20-ը Ատրպեյճանի կողմից լայնածաւալ յարձակման հետեւանքով ողջ արցախահայութիւնը պարտադրուած տեղահան եղաւ, մարդիկ դուրս եկան իրենց հայրենի գիւղերից, քաղաքներից ու ամառներից:

Բոլորի միակ նպատակն էր փրկուել, հասնել Մայր Հայաստան, բայց դեռ պէտք էր յաղթահարել ատրպեյճանական տիրապետութեան տակ անցած Հաքարի կամրջի անցակէտը:

Շատերն իրենց զոհուած հայրերի, եղբայրների ու զաւակների շիրիմներին թողեցին, սրբութիւն համարուող շքանշանները, նկարներն ու զինուորական գրքոյկները. լսել էին՝ ազերիները առաւել հետապնդում էին այն ընտանիքներին, որոնք անցած 30 տարիներին ունեցել են հերոսաբար մարտնչած զաւակներ՝ հայրեր, որդիներ:



Արցախում բնակուող ընտանիքներից իւրաքանչիւրը բախում էր իւրատեսակ դժուարութիւնների՝ մագապուրծ հասնելով Հայաստանի Սիւնիքի մարզի Գորիս քաղաքի Կոռնիճոր բնակավայր: Առաւել դժուար կացութեան մէջ էին յայտնուել բազմազաւակ ընտանիքները, սոցիալապէս անապահովներն ու հաշմանդամութիւն ունեցողները:

Պատերազմների ընթացքում ամենաշատը տուժում են երեխաները, որոնք իրենց կեանքի ողջ ընթացքում կրում են այդ հոգեկան տառապանքն ու ապրումները՝ իրենց ներսում խաթարելով չարի ու բարու իրենց պատկերացումները:

Բազմանդամ եւ սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքներին թեքեանցիների նիւթական աջակցութիւնը որոշակի ջերմութեամբ ու առանձնայատկութեամբ ընկալուեց:

Նեղինար Արզումանեանի 9 հոգանոց ընտանիքը ապրում էր Հաղրութի շրջանի Տումի գիւղում, աղջիկների՝ (9տ.17տ.19տ.), եւ տղաների՝ (6տ.8տ.12տ.13տ) հետ: Ունէր մեծ տուն ու այգի: Արցախում կրկին ապրելու միտքը մնացել է անցելու: Այժմ բնակուում են Հայաստանի Կոտայքի մարզի Չարենցաւան քաղաքում 3 սենեականոց բնակարանում, յարմարուել են...

Ստեփանեան Ալլա՝ 39 տ. Ընտանիքի անդամների թիւը՝ 10: Արցախում Ապրել են Մարտակերտի շրջ. Գիւղ Մատաղիս, պատերազմից յետոյ տեղափոխուել են Ստեփանակերտ, ամուսինը զոհուել է 2020 թուականի 44-օրեայ պատերազմում, նրա երկու տղաները՝ Սամուէլն ու Արսէնը զոհուել են 2023թ. Սեպտեմբերի 19-ին տեղային մարտերում: Այժմ ապրում է՝ 62 տարեկան հօր, 62 տ. Ալուինա մօր, եղբօր՝ Անդրանիկի նրա կին Նունէի իրենց երեխաներ՝ 8 տարեկան Կամոյի, 6 տարեկան Ալբինայի, ու ամսական Արիանայի, քրոջ՝ Անահիտի, ում ամուսինը զոհուել է, 12 տարեկան Վահէի հետ: Բազմանդամ այս ընտանիքում երեխանները շատ դժուար են յարմարուում նոր բնակավայրում.- ասում է. «Ոնց որ մարդու հոգին այստեղ լինի, սիրտը՝ այնտեղ, շատ դժուար է: Որ օրը կարողանանք հետ վերցնել այդ հողերը, ոչ մէկս էլ չենք մնայ այստեղ»:

29 տարեկան Մովսիսեան Լուսինէի, (նա հիւանդ է, ընդունում է քիմիատերապիա) 9 հոգանոց ընտանիքը Արցախում ապրել է Ստեփանակերտում, ամուսնու՝ Յովհաննէսի, 6 տարեկան աուտիզմով հիւանդ Լեւոնի, 2,5 տարեկան աղջկայ՝ Մարիի, ամուսնու քրոջ՝ Խասմարդի (ուժ ամուսինը զոհուել է 2023 թուականի Սեպտեմբերի 20-ին) նրա տղայ՝ 5 տարեկան Հայկի, 3 տարեկան Մարիայի, սկեսուր՝ Ալվարդի, սկեսրայր Վլադիմիր 73տ.: Այժմ ապրում են Հայաստանում Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում. «ընտրեցինք այնպիսի տեղ, որ մօտ լինի հիւանդանոցը, քանի որ տղաս եւ ես ամէն ամիս բժշկի այցելելու կարիք ունենք. միայն աուտիզմով հիւանդ տղայիս՝ Լեւոնի համար հարկ կը լինի ամէն ամիս 50.000 դրամի դեղ գնել»:

36 տարեկան Բեջանեան Գեղամի 7 հոգանոց ընտանիքը Արցախում

ապրել է Ստեփանակերտում. կնոջ Վալենթինայի, աղջիկներ՝ 7 տարեկան Նունէի, 6 տարեկան Քաթարինայի, 3 տարեկան Սուսաննայի, 7 տարեկան Միհրանի, 72 տարեկան մօր հետ այժմ ապրում են լոռու մարզի Ազնուաճոր գիւղում ոչ բարուք տանը. «Մենք մեր գերդաստանով, այլ ազգականների հետ ենք դուրս եկել Արցախից: Բոլորս էլ իրար մօտ տներում ենք ապրում: Կը փորձենք յարմարուել, հող մշակել ի հարկէ նախկինի պէս չենք ակնկալում ապրել, սակայն գոնէ անվտանգ ենք ու հանգիստ»:

Փարամագեան Աւոյի Արարատի 10 հոգանոց ընտանիքը Արցախի Մարտունի շրջանի Մուշկապար գիւղից են: Տեղափոխուել են Հայաստանի Արագածոտն մարզի Կարբի գիւղում: Հօր՝ Արարատի 53 տ., մօր՝ Սուսաննայի, 91 տարեկան Անժելա տատի, եղբայրներ՝ 21. գարմոյի, 18 տարեկան Արսէնի, 17 տարեկան Արայիկի, 15 տարեկան Արամի, 9 տարեկան Աշոտի, Արեգա հօրաքրոջ (ուժ տղան զոհուել՝ 2023 թ. Սեպտեմբերի 19-ին դիրքերում): Աւօն իր բազմանդամ ընտանիքի հետ Արցախի իրենց գիւղում սեփական տուն է ունեցել, զբաղուել են հողագործութեամբ: Ասում է. «Հիմա Հայաստանում աշխատանք գտնելը բարդ է: Ինչ անենք, պիտի ստիպուած գոյատեւենք մինչեւ գարունը բացուի, որ գիւղատնտեսական աշխատանքներ անենք»:

Արցախից Հայաստան բռնագաղթած մօտ 120.000 խեղուած ճակատագրով ու անորոշ վիճակում յայտնուած արցախահայերից մօտ 3000 մարդ այս պահի դրութեամբ արտագաղթել է: Եթէ Հայաստանի Հանրապետութիւնը չկարողանայ տուն ու տեղ, երազանք ու ապագայ կորցրած արցախցիներին տեր կանգնել, հոգալ ու օգնել, շատերը կը մեկնեն:



Ահա այստեղ է, որ պէտք է ազգովի միաւորուենք, օգնենք յաղթահարելու արցախցու ժամանակաւոր խնդիրներն ու հոգսերը, միջավայր ստեղծել, բնակարանային ու աշխատանքի զբաղուածութիւն ապահովել նրանց համար, որպէսզի իրենք օտար չզգան իրենց Մայր Հայաստանում:

Արցախահայերի օգնութեան ծրագրերը շարունակուում են: Խնդրում-յորդորում եմ միացեք ծրագրին Արցախահայութիւնը մեր բոլորի կարիքը ունեն:

Ծրագրին միանալու համար կարող էք Գանատայում՝ Tekeyan Cultural Association Artsakh Aid, 825 Manougian Str., Ville Saint-Laurent, Quebec H4N 1Z5, Canada հասցեով, <https://www.convergepay.com/hotelpayments/?ssl-tsn-auth-token=khtGf%2FjkTgWma7CEev3bQaaayrSp5tT#!/> payment-method

Իսկ ԱՄՆ-ում նուիրատուութիւնները ուղարկել հետեւեալ հասցեով. Tekeyan Cultural Association Artsakh Aid, 755 Mount Auburn Street, Watertown MA 02472, <https://givebutter.com/AGuStb>,

ABAKA

SECTION FRANÇAISE

LUNDI, 6 NOVEMBRE 2023

L'Arménie devrait éviter de remplacer la diversification de sa politique étrangère par une stratégie antirusse

Écrit en anglais par Benjamin Poghosian et publié dans *The Armenian Mirror-Spectator* en date du 23 octobre 2023

Depuis la guerre du Haut-Karabagh en 2020, la diversification est probablement le terme le plus utilisé dans les discussions sur l'avenir de la politique étrangère arménienne. Il convient de noter que l'Arménie a cherché à mener une politique étrangère diversifiée depuis les premières années de son indépendance.

Parallèlement à l'établissement d'une alliance stratégique avec la Russie, l'Arménie a lancé un partenariat pragmatique avec l'UE et l'OTAN.

L'Arménie a signé son premier IPAP (Plan d'action de partenariat individuel) avec l'OTAN en 2005. L'OTAN a participé activement aux réformes de défense en Arménie accélérées après 2008, y compris l'éducation et l'examen stratégique de la défense.

L'Arménie s'est joint à l'initiative de partenariat oriental de l'UE en 2009. Elle n'a pas réussi à conclure l'accord d'association avec une zone de libre-échange approfondie et complète. Au lieu de cela, elle a signé l'Accord de partenariat global et renforcé en 2017, qui constitue désormais une base solide pour les relations entre l'Arménie et l'UE.

Cependant, la guerre du Haut-Karabagh en 2020, les incursions de l'Azerbaïdjan en Arménie en 2021 et en septembre 2022 et la guerre entre la Russie et l'Ukraine ont rendu nécessaire une plus grande diversification. Enlisée en Ukraine, la Russie n'a pas pu remplir pleinement toutes ses obligations de sécurité envers l'Arménie. Le rôle croissant de l'Azerbaïdjan et de la Turquie auprès de la Russie a eu, simultanément, un impact sur la politique globale de la Russie dans le Caucase du Sud.

L'Azerbaïdjan a exploité cette situation avec succès. Il a imposé un blocus au Haut-Karabagh en décembre 2022. Il a lancé une offensive militaire en septembre 2023, forçant la dissolution de la République autoproclamée du Haut-Karabagh et le déplacement de l'ensemble de la population arménienne de la région.

Cependant, l'appétit de l'Azerbaïdjan ne fait que croître et ses objectifs sont désormais ce qu'on appelle les enclaves et l'établissement de routes qui relieront l'Azerbaïdjan au Nakhitchevan et à la Turquie via l'Arménie.

Oui, après avoir établi un point de contrôle dans le corridor de Latchine en avril 2023, l'Azerbaïdjan a abandonné ses demandes d'un couloir extraterritorial via la province arménienne de Syounik. Cependant, Bakou exige toujours des garanties particulières pour la sécurité des Azerbaïdjanais qui transiteront par l'Arménie. Les « garanties spéciales » sont un terme assez vague et peuvent être exploitées par l'Azerbaïdjan de diverses



manières.

Alors que la menace de nouvelles incursions militaires de l'Azerbaïdjan demeure élevée et que la Russie continue de se laisser distraire par l'Ukraine tout en cherchant simultanément à améliorer ses relations avec l'Azerbaïdjan et la Turquie, l'Arménie devrait prendre des mesures énergiques pour diversifier ses politiques étrangère et de défense, en cherchant à trouver de nouvelles sources d'approvisionnement en armes et de dissuasion politique contre l'Azerbaïdjan. Les mesures prises par l'Arménie l'an dernier, notamment les accords de livraison d'armes signés avec l'Inde, les efforts visant à accroître la présence de l'UE en Arménie et le début des discussions sur d'éventuelles livraisons d'armes en provenance de la France, sont des pas dans la bonne direction.

Cependant, il existe une ligne claire entre une diversification plus poussée de la politique étrangère et de défense arménienne et la poursuite d'une politique antirusse, qui entraînera l'Arménie dans une guerre Russie-Occident ou « autoritarisme contre démocratie ». Alors que l'Arménie est confrontée à des menaces importantes de la part de l'Azerbaïdjan et de la Turquie, y compris le potentiel d'invasions militaires à petite ou grande échelle, faire de l'Arménie un autre point chaud antirusse et pro-occidental dans l'espace post-soviétique augmentera considérablement les risques pour la sécurité de l'Arménie.

La Russie fera tout pour empêcher la domination occidentale sur l'Arménie, et le Kremlin dispose d'un large éventail d'options pour faire pression sur l'Arménie. Cela pourrait utiliser de multiples leviers économiques, depuis le prix du gaz russe jusqu'à la création d'obstacles pour les entreprises arméniennes souhaitant atteindre la Russie, qui est la destination d'environ 40 % des exportations totales de l'Arménie. Plus dangereux encore, l'Azerbaïdjan pourrait utiliser les sentiments antirusse de l'Arménie dans ses négociations avec la Russie, décrivant l'Arménie comme un « lieu hostile à la Russie », qui veut rapprocher davantage

Suite à la page 6

L'Assemblée nationale du Québec appuie les Arméniens déplacés

Les élus québécois ont condamné l'invasion du Haut-Karabagh par l'Azerbaïdjan et réclamé une solution humanitaire pour les 120 000 déplacés arméniens de l'enclave.

Une motion déposée en ce sens par la députée caquiste Céline Haytayan (Laval-des-Rapides) a été adoptée à l'unanimité par l'Assemblée nationale. En entrevue avec La Presse Canadienne, elle n'a pas voulu s'engager quant à un soutien financier de son gouvernement aux réfugiés.

« Les citoyens et citoyennes du Haut-Karabagh craignent un génocide, il faut les écouter », a lancé le député Guillaume Simard-Cliche, de Québec solidaire (QS), lors du débat sur la motion : des propos qui résonnent puisque les Arméniens ont déjà été victimes d'un génocide en 1915.

Ce conflit a été largement éclipsé par l'agression sanglante du Hamas en Israël et l'escalade militaire qui a suivi.



Accord France-Arménie sur l'achat d'armes



La France s'est engagée à renforcer la défense aérienne de l'Arménie, à former du personnel militaire arménien et à aider le pays à réformer ses forces armées, alors que le groupe français Thales et Erévan ont signé, le 23 octobre dernier, un contrat pour l'achat de trois systèmes radar.

Le ministre français de la Défense Sébastien Lecornu et son homologue arménien Souren Papikian ont également signé une « lettre d'intention » sur la future livraison de missiles sol-air à courte portée Mistral.

Ils n'ont donné aucun détail financier ou autre sur ces accords lors d'une conférence de presse conjointe tenue après leurs entretiens à Paris. M. Lecornu a souligné le caractère défensif de ce qui sera la première arme majeure de fabrication occidentale fournie à l'Arménie.

« Il s'agit d'un système d'armes qui, de par sa nature même, ne peut être utilisé qu'en cas d'agression contre le territoire arménien et souvent avec des populations civiles en dessous », a-t-il déclaré, faisant allusion au risque d'invasion de l'Arménie par l'Azerbaïdjan.

Suite à la page 6

Le Congrès du Conseil de l'Europe condamne l'opération du Haut-Karabagh

Le 26 octobre 2023, lors de sa 45e session à Strasbourg, le Congrès des pouvoirs locaux et régionaux du Conseil de l'Europe a tenu un débat sur la situation humanitaire suite à la fuite de plus de 100 000 Arméniens du Karabagh.

Dans une déclaration présentée par Bernd Vöhringer (Allemagne, PPE/CCE), le Congrès a fermement condamné l'opération militaire menée par l'Azerbaïdjan au Karabagh les 19 et 20 septembre 2023 et le blocus de la région qui a duré dix mois auparavant, qui ont conduit à une situation humanitaire désastreuse. Tout en reconnaissant l'intégrité territoriale de l'Azerbaïdjan, le Congrès a déploré les graves conséquences humanitaires de la situation et a appelé l'Azerbaïdjan à s'abstenir de toute action susceptible de mener à une nouvelle détérioration de la situation et à libérer tous les représentants du Karabagh détenus, y compris au niveau local.

Le Congrès a exprimé sa solidarité avec les autorités locales arméniennes accueillant les Arméniens du Karabagh, s'est félicité du soutien déjà apporté aux communautés locales par le gouvernement arménien et a affirmé sa volonté d'aider

Suite à la page 6



Selon le Canada, il faut assurer une stabilité vitale dans le Caucase du Sud

La ministre canadienne des Affaires étrangères, Mélanie Joly, a déclaré le 27 octobre, à l'issue de sa visite à la base opérationnelle de la mission dans la ville thermale arménienne de Djermouk, qu'il fallait assurer une stabilité vitale dans la région.

« Soutenue par la contribution tierce du Canada, la mission de l'UE en Arménie (EUMA) travaille à surveiller la frontière entre l'Arménie et l'Azerbaïdjan, garantissant ainsi une stabilité et une sécurité vitales dans le Caucase du Sud », a-t-elle déclaré dans un message sur X, anciennement Twitter.

Par ailleurs, la ministre a publié une photo de sa rencontre avec les dirigeants de la société civile arménienne, écrivant : « Garantir une paix et une sécurité durables dans la région, renforcer les démocraties et amplifier les voix arméniennes – autant de principes clés discutés avec les dirigeants de la société civile ici en Arménie. Merci à tous pour votre perspicacité, votre point de vue et votre plaidoyer ».



La Baronne Cox sur l'Artsakh : « Aucune nation ne devrait faire passer le pétrole avant les préoccupations humanitaires »

La baronne Caroline Cox, fondatrice de HART (Humanitarian Aid Relief Trust) et Crossbench Peer à la Chambre des Lords du Royaume-Uni, a parlé de la situation en Artsakh, du blocus par l'Azerbaïdjan et de la récente décision militaire.

« La possibilité du mot génocide a été utilisée parce que [si] les Arméniens ne parviennent pas à sortir... alors cela pourrait se transformer en un génocide potentiel, et c'est profondément inquiétant », a-t-elle déclaré.

Suite à l'annonce par l'Artsakh de sa dissolution d'ici le 1er janvier 2024, la baronne Cox a répondu : « Bien que l'Artsakh soit reconnu comme faisant partie de l'Azerbaïdjan par la communauté internationale, son attachement à ses traditions arméniennes et chrétiennes sont largement reconnus et le nettoyage ethnique forcé des Arméniens qui y vivent depuis des siècles a été qualifié de « crime de guerre ». Il ne doit y avoir aucune impunité pour ces politiques brutales et leurs auteurs doivent rendre des comptes. »



VISITEZ ABAKA NEWS
www.abakanews.org

L'Arménie ...

Suite de la page 5

les États-Unis et l'UE des frontières sud de la Russie.

L'Iran pourrait également ne pas être satisfait du changement géopolitique potentiel de l'Arménie. Depuis la fin de la guerre du Haut-Karabagh en 2020, l'Iran a signalé qu'il s'opposait à tout changement géopolitique dans la région.

Beaucoup en Arménie interprètent cela uniquement comme des objections de l'Iran à l'attaque et à l'occupation de l'Arménie du Sud par l'Azerbaïdjan, mais l'Iran exprime également ses objections au revirement de politique étrangère de l'Arménie de la Russie vers l'Occident.

L'Iran et la Russie soutiennent l'établissement d'un format régional (3+3 ou 3+2) pour le Caucase du Sud, faisant circuler l'idée selon laquelle les problèmes régionaux devraient d'abord être résolus par les puissances régionales.

L'Azerbaïdjan et la Turquie ont avancé cette idée immédiatement après la fin de la guerre du Haut-Karabagh en 2020 et la Turquie a eu une idée similaire après la guerre Russie-Géorgie de 2008. Un revirement réel ou perçu de l'Arménie vers l'Occident, tout en se présentant comme une nouvelle rampe de lancement pour l'Occident dans le Caucase du Sud, pourrait présenter l'Arménie sous un jour négatif pour la Russie, l'Iran et la Turquie.

